

891.99

mu - 64




891.542-191

Խ-65

Ա. Թ Ա. Բ Ե Կ Խ Ն Կ Ո Յ Ե Ա Ն

# Ա Ռ Ա Կ Ն Ե Բ

Ս. ռակներ և հիմ օւերից,  
բայց և զրի առայ նորից  
Ս. Խ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Է Լ Ե Բ Ե Ա Մ Ա Պ. Խ. Ա Ղ Ա Բ Ա Բ Ի Բ. Պ Ո Լ Ի Բ 7.  
1917

19 NOV 2011

ԿՈՎԱՆԻՐ ՀԱՅՈՑ ՀՐԱՄ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Հ/Տ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

6894.39

Խ-64

Ա. Ա.

ԱԹԱՐԵԿ ԽՆԿՈՅԵԱ

ԳՐԱԴԱՐԱՆ

# ԱՌԱԿՆԵՐ

1001  
1924

Սուակիներ են իին օրերից,  
բայց չեն գրի տռայ ։ Եսորից։  
Ս. Խ.



Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Տպ. Ն. Աղանեանի. Պոլից. 7.  
1917

111

13 F. 9. 2. 8

39727



Աթարէդ Խնկոզեան



Արևոր ու Մարգարիտը

## ԱՖԼՈՐՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Օրւան մէկը մի աքլոր  
 Քջուջ-մջուջ անելիս,  
 Տեսաւ մի հատ մարգարիտ  
 Աղբի միջին փայլելիս.  
 Կոցեց, ասաւ. «Էս ի՞նչ է,  
 Ինձ հարցնես՝ ոչինչ է.  
 Այ, վայը տամ էն մարդին,  
 Որ գին կը տայ մարգարտին.  
 Իսկ ինձ համար մի գարին  
 Արժէր էսպէս հազարին:

## ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՁԻՒՆԸ

Թոփի-վսի մի ճպուռ  
 Ողջ ամառը շուռ ու մուռ,  
 Երգեց, ճռաց  
 Ճըռճըռաց:

Ով որ փքւի,  
 Նա կը չքւի:

## ԿՎՈՒՆ ՈՒ ՏԱՏՐԱԿԸ

Ծառի վրայ տիսուր կկուն  
 Հա կրկնում էր անվերջ կռւ-կռւն,  
 — կկուր քուրիկ,  
 Հերիք, հերիք  
 Կռւ-կռւ անես,  
 Հոգի հանես.  
 — Այ բախտաւոր ընկեր տատրակ,  
 Սիրտս լինէր գրած տետրակ.  
 Մի կարդայիր ամեն էջը,  
 Տեսնէիր թէ ինչ կայ մէջը,  
 Դու չես տեսել  
 Զիգրի մըմուռ,  
 Դու չես չափել  
 Արցունք բուռ-բուռ.  
 Դու չես թափել  
 Ցաւից փետուր:  
 Ախ, վախ...  
 Գարնանը վաղ

Եկ ձու ածի,  
 Զագ ունեցի,  
 Վերջը մենակ,  
 Միաբընակ,  
 Սև ձանձրոյթից  
 Քո սև սրտից  
 Կուշկու կանչի,  
 Ու քեզ տանջի:  
 Երնէկ հաւին—  
 Ինձնից լաւին,  
 Բաղին, Սագին.  
 Զագերն անգին  
 Հեռանում չեն  
 Մօրը մօտից,  
 Ոնց թէ կապ են  
 Ոտը ոտից:  
 Իմ ձագերը սիրուն, սիրուն,  
 Իրենց մօրը որ չեն սիրում:  
 — Կկու քուրիկ, թէ որ ճիշտ է,  
 Միրող մօրը սաստիկ վիշտ է.  
 Բայց, քնուրիկ ջան,  
 Թարուն, ամառ,

Միշտ անդադար  
 Թոշկոտում ես  
 Հա ծառից ծառ:  
 Ոչ տուն ունիս,  
 Ոչ բուն ունիս,  
 Էլ որտեղ գու  
 Ածեցիր ձու,  
 Զագ հանեցիր  
 Ու թոցրիր:  
 — Խելքից դարտակ  
 Յանցառ տատրակ,  
 Նախանձ, չըկամ,  
 Բա ման չը գմմ...  
 Ի՞նչ. գարունը  
 Ծալապատիկ  
 Ընկնեմ բունը  
 Հա տիկ, տիտիկ,  
 Պատուեմ սրտիկ:  
 Քիչ կան դաշտում  
 Այլոց բներ,  
 Նրանց մէկում  
 Դրի ձւեր:

— Եղ է, կկու,  
Որ չի  
Լինի  
Մինդ երկու։  
Ով չունենայ իրա տունը,  
Ով չունենայ իրա բունը,  
Չածի ձւան,  
Նստի վրան,  
Հոգս չը տանի,  
Չադի չը հանի,  
Կու-կու կանի։



Կուն ու Տարակը

○○○○○

**ՆԱՊԱՏԱԿՆԵՐԸ**

Նապաստակներն ամբողջ ցեղով  
Աստառի մէջ արին ժողով։

Եւ ժողովում մի ծեր Շլդիկ  
Ասաւ, «Լսէք, մեծ ու պստիկ։

Շունը հաջէ,  
Քամին փըշէ,  
Ամպը դոռայ,  
Մուկը ճռայ,  
Մեր էս ցեղը  
Հա կը դողայ։


1001  
1024

Հսպէս ապրել չի կարելի  
Էս աշխարհում չարիքով լի.  
Չարն ու բարին աշխարհի հետ,  
Թողնենք գնանք, լցւենք մի գետ.  
Շլդիկները՝ ոչ այս, ոչ այն,  
Ելան ընկան մահի ճամփան.  
Հէնց որ եկան գետին մօտիկ,  
Էն գորտերը, մեծ ու պստիկ,  
Խառնիխուռը

Բնկան ջուրը։

Իսկոյն այդտեղ մի այլ Շլդիկ՝  
— Դարձէք, կանչեց պապիս որդիք,  
Էլ մի կախէք ձեր բթերը,  
Մեզնից վախկոտ են գորտերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՍՏԱՄԱՆ ՎԱՐԱՐԱ Բ  
7/11 1922  
Ա. ԱՅԱՍՆԻՑՅԱՆԻ ԱՆԴԱՆ  
Ա. ԱՅԱՍՆԻՑՅԱՆԻ ԱՆԴԱՆ



Նապաստակներ:

## ԳՈՐՏԸ

Լըռւն,  
Փըռւն  
Գորտը կռռան  
Զըհորումը  
Զրի վրան,  
Իր չորս կողմը  
Աչք ածելով,  
Ասաւ. «Կասեն՝  
ՄԵծ է ծովը.  
Չորս թիզ չըկայ  
իմ թզովը»:

## ԳՈՐՏՆ ՈՒ ԱԳՈՐԱՒԾ

Գորտը ընկած ցամաք առռւն  
Կըրկոռում էր ու կըրկոռում:  
— Քիչ կըկըռա, այ գորտ քեռի,  
Աշուն կըգայ, ջուր կը բերի,  
Յոյս էր տալիս մի ծեր ագռաւ:

«Ե, ինչ անեմ, սիրտս վառաւ,  
Մինչև ցամաք առուն ջուր գայ,  
Գորտի աչքն էլ հօ դուրս կը գայ:



Դորտն ու Ագռաւը,

### ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

Ոչ մի կաթիլ թռն չը տալով  
Երաշտից սով մեծ գաւառին,  
Ամպը վերից զիլ սահելով  
Գնաց հասաւ ովկեան ծովին,  
Այնտեղ վերից  
Մխւեց,  
Կախւեց,  
Ուզածի պէս  
Թափւեց,  
Չափւեց,

Ու կանգնելով ծեր սարի գէմ՝  
—Տեսան, գոչեց, ինչ առատ եմ:  
—Վայ քո ճարը,  
Ասաւ սարը.  
Մեծ բան արաւ.  
Ծովն էր ծարաւ:  
Մի մեծ գաւառ մատնեց սովին,  
Թոնը բերեց, յանձնեց ծովին:

◆◆◆◆◆

### ԽԵՑԵՄՈՐԹՆ ՈՒ ԳՈՐԸԸ

—Մօրդ գլխին հող ու մոխիր,  
Անոնց որդիս, քայլըդ փոխիր.  
Որդի ծնայ,  
Կրակն լնկայ.  
Ծուռափիկ-մուռափիկ որ ման չի գայ  
Միահանգի,  
Սիրտ կը ճաքի,  
Ասաւ ձագին խեցեմորթը.  
Լսեց գորտը,  
Ասաւ, «Քոյրիկ,  
Դու էլ հերիք...

Կուզես պահի, կուզես մորթի,  
Ծուռտիկ մօրից, ծուռտիկ որդի».



### ՖԱՄԻՆ ՈՒ ՄԱՐԱԳԸ

Քամին վազեց արագ, արագ,  
Կանգնեց կանչեց. «Մարագ, մարագ,  
Հօ զիտես՝ ինչ ոյժի տէր եմ.  
Դուռդ լայն բաց, դարման բերեմ».  
Մարագը թէ՝ «Գնա բանիդ,  
Ես կարօտ չեմ քո դարմանիդ.  
Քո դարմանը թնդ քեզ լինի,  
Իմ դարմանը դու մի տանի».

### ՓԱՅՏԱԿԱՏՆ ՈՒ ՄԱՀԸ

Ծերն հազալով, կղտալով,  
Թոյլ ծնկներին զօռ տալով,  
Մէջքից ցախը վեր առաւ,  
Նստեց վրան սուգ արաւ,




Փայտահատն ու մահը:

— Ես տուն ունեմ,  
 Դուռ չունի,  
 Թանիքը ունեմ,  
 Խուփ չունի:  
 Չիւն է ծածկել դռնակս,  
 Փայտն է մաշկել կռնակս:  
 Ես ծեր... անցած...  
 Տնով քաղցած.  
 Հա մերկ, հա զուրկ...  
 Տալիք ու տուրք,  
 Խարճ ու խարաճ,  
 Լեզուս է կարճ...  
 Վայ, վայ, վայ, վայ,  
 Ո՞ւր ես, սև մահ...  
 Այսպէս ապրուստ...  
 Մին էլ՝ պուպուստ  
 Մահը թէ՛ ռհա,  
 Ծերուկ, բնչ կայ:  
 — Ասուած վկայ,  
 Ոչինչ չը կայ.—  
 Ճաքած լեղին,  
 Մոմից դեղին,

Կըմկմալով  
 Լեզուին տալով  
 Մերուկն ասաւ. — մինը չըկար,  
 Որ էս փայտը շալակս տար:  
 Ապրես, տեսար՝  
 Ի՞նչ շուտ հասար,  
 Բան մի կարծի,  
 Փայտն ինձ բարձի  
 Ու յետ դարձի:

### ԱԳԱՂԱՆ ՈՒ ԿՑՈՒՐԸ

Մի աքաղաղ կարմրապէծիկ,  
 Իր ոտները երկար ու ձիգ,  
 Կտրին տալով փուեց, ձգւեց  
 Ու զարմանքով մի հարց տւեց.  
 — Էս մնց է որ, Տէր, Բ' ոգմեղայ,  
 Էս կտուրը փուլ չի գալիս:



## ՔԱՄԻՆ ՈՒ ՄԺԵՂԸ

Արել անցաւ,  
Քամին վեր կացաւ.  
Մժեղը տեսաւ որ քամին իրեն  
պտըտեց,  
Խոքը իսկոյն խոտը բռնեց,  
իտըտեց,  
— Մժեղ, ինչու ես խոտը խտըտել,  
— Էն քեզնից եմ ազատել,  
Ո՛ր չը հանես սարէսար,  
Ո՛ր չը գցես քարէքար.  
Բա գիւղացին մեղքը չի,  
Հնձած խոտը զուր կորչի:

=

## ՊՈՒՏՈՒԿԸ

«Տակս ոսկի է», մի օր փքւած,  
Հպարտ, հպարտ պուտուկն ասաց  
Շերեփը թէ՝  
— Սուս, ամօթ է,

Մի՛ պարծենար գոնէ ինձ մօտ,  
Հաստափորիկ կաւէ անօթ.  
Հերիք փքւես դու քեզ ու քեզ,  
Ո՞րտեղից եմ գալիս բա ես:




## ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից  
Փախաւ գեղը.  
— Նեղն եմ, նեղը,  
Ասաւ կատւին.  
Ա'սլան բալա,  
Քո հօր պատւին,  
Մի ճար արա.  
Մի տես հլա,  
Որսորդ ու շուն,  
Թաղի, թուլա  
Միսս են կրծում,  
Ինձ հալածում.  
Աստւած կտրի  
Նրանց հոտը,

Մի մարդ ցոյց տուր  
 Պահւեմ մօտը:  
 —Այ ցեղակից, գոչեց կատուն,  
 Գնա՞ մտիր Մարօենց տուն.  
 Նա չափազանց բարի կին է:  
 —Ես էլ գիտեմ, որ անդին է,  
 Բայց որ նրա հորթն եմ կերել...  
 —Բկիդ կանգնէր, լաւ չես արել.  
 Որ էդպէս է,  
 Այ ամաչկոտ,  
 Ցովսէփի մօտ...  
 —Է՛, ինչ ասեմ, էս ամառը  
 Յանկարծ չուտեմ նրա գառը:  
 —Ում ասեմ էլ...  
 Հա, մեր Զաքին.  
 —Էս գարնանն էլ  
 Նրա մաքին...  
 —Ո՞վ մնաց էլ,  
 Հա, էրէցը:  
 —Էս աշնանն էլ  
 Նրա էծը...

—Ա՛յ, դու ուտես  
 Չոռի մեծը:  
 Քանիսն եղաւ,  
 Հինգը... վեցը...  
 Ի՞նչ երեսով  
 Գիւղը մտար.  
 Տեղ չը գտար:  
 Գիւղն յիմար է  
 Որ թշնամուն պատսպարէ:  
 Ո՞վ ինչ բրթի,  
 Է՞ն կը խրթի:



## ԼՈՐՆ ՈՒ ԹՌՉՆՈՐՍԸ

Աշնան դէմ, դուրսը,  
 Ճարպիկ թռչնորսը  
 Թակարդ էր դնում,  
 Որ թռչուն որսայ:  
 —Էդ ինչ ես անում,  
 Վարպետ, ինձ ասա,  
 Կանգնելով բարդին  
 Լորն ասաւ մարդին:

— իսչ եմ անում...  
 Աչքերդ բնւոս են.  
 Քաղաք եմ շինում,  
 Որ թռչունները  
 Ցրտից չը մըսեն:  
 — Քաղաք... հը... այ գութ,  
 Երանի հոգուդ.  
 Դամ նայեմ մի քիչ,  
 Գրւեմ բնակիչ:  
 Լորը ոտ, ոտ առաջեց,  
 Թակարդն ընկաւ, հառաչեց.  
 — Ա՛յ, գլխիդ չոգի  
 Շէնքդ, անհոգի.  
 Շինում ես ծուղակ,  
 Անւանում քաղաք:

---

## ՈՐՍՈՐԴ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Զանազան  
 Տեսակ գազան  
 Մի օր արջին  
 Քաշտի միջին

Կալ մէջ արին, խեղղոտեցին  
 Ու բաժանել սկսեցին:  
 Նապաստակն էլ դրանց միջից,  
 Քաշեց արջի մի ականջից:  
 — Սրան մտիկ.  
 Է՞ս ինչ, Շլդիկ,  
 Դժու որտեղից մեր մէջ ընկար,  
 Որս անելիս հետքդ չըկար:  
 — Ե՛, Եղբայրներ, զարթնէք քնից.  
 Բա ով էր, ով  
 Արջին զօռով  
 Սարից, ձորից,  
 Խոր անտառից  
 Հանեց, գցեց ձեր ճանկերը.  
 Էն ես՝ չէի, ձեր ընկերը,  
 Պատասխանեց նապաստակը  
 Կէս ականջը թաթի տակը:  
 Սուտ պարծանքը անվիճելի  
 Թւաց խմբին, շատ հաճելի.  
 Ուստի տւին իր պահանջը,  
 Թաթի տակի կէս ականջը:

---

## Կ Ր Ի Ա Ն

— Գիտեմս այնպէս մի կենդանի,  
 Որ իր տունը մէջքին տանի։  
 — Գիտեմ, այս, դա կրիան է։  
 — Թէ որ գիտես, այդ ի՞նչ բան է։  
 — Իսկոյն կասեմ, դու իմացի։  
 Կրիան ունէր մի դրացի։  
 Խիստ շատախօս ու կռւարար,  
 Խեղճ կրիային շան օր կրտար։  
 Մի օր կրիան ճարահատած  
 Հայր Աստղծուն գանգատ գնաց։  
 — Մեռնեմ, ասաւ Հայր, Քո աչքին,  
 Իմ տունը դիր էս իմ մէջքին,  
 Որ ինձ իսկի մօտիկ ու կից  
 Էլ չունենամ ես վատ դրկից։  
 Հայր Աստւածն ասաւ. «Բարի,  
 Տունդ մէջքիդ միշտ ման արի։



## ԲԱՐԵՍԻՐՏ ԱՂԻԵՍԸ

Ծառի վրա երեք ձագ,  
 Իսկ աղւէսը ծառի տակ  
 Պղղղել է ու լալիս,  
 Թաթով գլխին է տալիս.  
 — Աշխարհը սուր է դառել,  
 Արիւնը ջուր է դառել։  
 Ո՛րսորդ, քո աչքը դուրս գայ,  
 Սրանից էլ մեղք բան կայ.  
 Սպանեցիր խեղճ մօրը,  
 Զագերն ընկան էս օրը.  
 Բաի միջին սոված են,  
 Ա՛խ, ինչ տեսակ ձայն կածեն,  
 Իմ կոյր աչքը տեսնում է,  
 Ասա, ձեռքս էլ հասնում է,  
 Որ մի կրտեմ որբերին,  
 Բարձր ծառի կատարին։  
 Ա՛յ թռչուններ,  
 Թևաւորներ,  
 Որ ձեզ չասեմ,  
 Էլ ժւմ ասեմ։

Որբիկներին էս անմարիկ  
 կտէք, ջրէք, արէք բարիք.  
 Մի թողէք որ սովից մեռնեն,  
 թող մեծանան, թեր առնեն:  
 Կկնւ, այ, քեզ պատրաստի բուն,  
 Երեք ձագի մայր եղիր դուն.  
 Քեզնից փետուր  
 Տակները տուր,  
 Դաշտից բան բեր,  
 Պահիր որբեր:  
 Դնւ, Տատրակիկ,  
 Հէնց բան արա  
 Խղճի մօտիկ,  
 Այ, փոխանակ օդամիջ,  
 Տաղի, խաղի, ել և էջի,  
 Իջիր դաշտեր,  
 Կրիր որդեր,  
 Տնւր ձագերին  
 Խեղճ ու անտէր:  
 Դնւ, Աղունիկ,  
 Գթնտմարիկ,

Շատ լաւ գիտես  
 Զագի կարիք:  
 Խղճա հոգիս, երեք ձագին,  
 Խղճա ու առ թեփդ տակին:  
 Եւ դնւ, Ծիծեռ,  
 Զես խղճում դեռ,  
 Երբ լաց, հառաչ  
 Աչքիդ առաջ  
 Դաշտն է առել  
 Ու ինձ վառել:  
 Դնւ էլ, Սոխակ,  
 Խղճի ընկեր,  
 Կերի տեղակ  
 Ասա երգեր:  
 Երբ որ փշի մեղմ զեփիւռ  
 Ծառ, ծաղկի անուշ հիւրը,  
 Դու էլ հետը, ծառի ձիւղքին  
 Նանիկ ասա երեք ձագին.  
 Երեք ձագին  
 Խեղճ ու մոլոր,  
 Անուշ ձայնով  
 Օրօր, օրօր:

Թեաւորներ,  
 Սեաւորներ,  
 Ես ինչ ամսեմ ձեր խղճերին,  
 Որ չէք օդնում էս խեղճերին,  
 Այս, խլանամ,  
 Այս, կուրանամ,  
 Էս կոկիծը հնց մոռանամ:  
 Գոնէ տատմօր ձայնը լսեն,  
 Բնի միջին էլ չըսպասեն,  
 Ծառից իջնեն, շոյեմ, շահեմ,  
 Աչքիս լոյսի նման պահեմ:  
 Իմ սանիկներ,  
 Իմ ջանիկներ,  
 Նախշուն ճուտեր,  
 Քաղցած, անտէր,  
 Գիրկս արիք,  
 Չեզ սփոփեմ,  
 Արցունքս հերիք  
 Չափեմ, թափեմ:  
 Ես խօսքի հետ երեք ձագը  
 Բնից ընկան ծառի տակը.

Տատմէրն էնտեղ հափ ու հուփ,  
 Զագերն արաւ ափ ու խուփ:




### ԿԱՂՆԻՆ ՈՒ ԵՂԵԳԸ

— Այս եղէգ,  
 Ինչ ցեղ էք,  
 Ասաւ ահագին  
 Կաղնին եղէգին:  
 — Քո ոյժն ինչ է...  
 Որ քամին փչէ,  
 Կամ պէտք է դողաս,  
 Կամ վուես, սողաս.  
 Էս ինչ ծիծեռնէ  
 Քեզ համար բեռն է:  
 Խլէզ  
 ու  
 Ճլէզ,  
 Մասիս սարն եմ, տես,  
 Արել, գիտես,  
 Չի համնում գոտիս,  
 Մըրիկը՝ ոտիս.

Գայիր, էլի,  
 Ողորմելի,  
 Իմ ոտների տակ բուսնէիր,  
 Վատ եղանակ չը տեսնէիր...  
  
 Խօսքը բերնում,  
 Մին էլ օդում,  
 Մթսոլորտում  
 Որոտ, ճայթոց,  
 Ամպի պայթոց,  
 Կայծակ ահեղ,  
 Կարկուտ, հեղեղ.  
 Ու էդ ժամին  
 Դիւոտ քամին  
 Փնջուն,  
 Վրչուն  
 Իրան առած,  
 Մի սոսկալի մըրիկ գառած,  
 Զլեց,  
 Խլեց  
 Կաղնին տակից  
 Ու երկնքի եօթը յարկից

Որ չը շփեց  
 Ցածի ժայռին,  
 Փշրեց, թափեց  
 Էն թշւառին:



## ԿԿՈՒՆ ԵՒ ԱԺԼՈՐԸ

Զնաշխարհիկ,  
 Իմ աքլորիկ,  
 Զայնդ զիլ-զիկ,  
 Ոսկին ծիլ-ծիլ.  
 Երգերիդ մէջ  
 Բիւր ելեէջ:  
 — Կկնւ քուրիկ,  
 Հուրիկ, բուրիկ,  
 Յո ձայն էլ է  
 Լաւ գեղգեղում,  
 Ծոր է տալիս  
 Ու մղմղում:  
 Երգ եմ լսել  
 Ես շատ ու քիչ,



Կկուն և Աքլորը:

Բայց չեմ տեսել  
 Քեզ պէս երդիչ:  
 — Ոսկեփետուր,  
 Աստւածատուր,  
 Կուզեմ  
 Լսեմ  
 Զայնդ անսպառ  
 Միշտ, անդատար,  
 Թէկուզ մի դար:  
 — Պուճպուճուրիկ,  
 Մի պուտ ջրիկ,  
 Կկնւ քուրիկ,  
 Երդւում եմ ես՝  
 Որ լոռում ես  
 Եսչափ, պհճուր,  
 Հսպասելով իմ աչքերը  
 Կտրում են ջուր:  
 Որտեղից է քեզ այդպէս ձայն,  
 Մաքուր, քնքուշ ու զնզպան,  
 Դուք էդպէս էք  
 Ամբողջ ցեղով,  
 Մի բուռ բան էք

Թէկ տեղով,  
Բայց ձեր երգը  
Խիստ յաջողակ,  
Չունի, չունի  
Ոչ մի սոխակ:  
—Գոհ եմ քեզնից,  
Զիւան աքլոր.  
Խղճով ասենք,  
Դու միալար  
Լաւ ես երգում  
Դրախտահաւից,  
Թռչունների  
Լաւի լաւից.  
Ողջ աշխարհը  
Խօսքիս վկայ,  
Քեզպէս երգիչ  
Չըկայ, չըկայ:  
Այդտեղ ծիտը՝  
Ծիտիկ-միտիկ  
Ասաւ՝ «Հլա»  
Արանց մըտիկ,  
Ի՞նչ լաւ գիտեն

իրար եղել.  
Ասա թողնի  
Պակաս տեղ էլ.  
Է՛, լաւ, հերիք իրար գովէք,  
Աշխարհ գիտէ թէ դուք ով էք:

## ՈՒՂՏԻ ԱԿԱՆՁՆԵՐԸ

Ուղտը մի օր գանգատ, բողոք,  
Հայր Աստծուն թէ՝ —Անողոք,  
Հորթն որ հորթ է, մողին մողի,  
Չես ստեղծել առանց պողի:  
Նայիր լէնքիս  
Ու երկէնքիս,  
Էս իմ շէնքիս  
Ու շնորհքիս.  
Ինձպէս ուղտը առանց պողի,  
Ո՞նց ետ ածեմ շուն ու թաղի:  
Աստւած ուղտին թէ՝ —Այ պոլող,  
Ականջներդ էլ թնդ մանրանան,  
Իրենց տեղում չորնան մնան:

## ՆԱՊԱՍՏԱԿՆ ՈՒ ՏԱՏՐԱԿԸ

Զըգիտեմ ով  
 Սուր պողերով՝  
 Քնած տեղը առանձին  
 Հարւածել էր առիւծին;  
 Արքան փչեց իր փողը.  
 —Վայ, նանի ջան, իմ կողը,  
 Գլխին պողեր կրողը  
 Էլ չը մնայ իմ հողը.  
 Այսո՞ւ այն, ոչս՝ ոչ:  
 Մին էլ ընկաւ քոչէ քոչ—  
 Յուլ, այծ, եղնիկ, եղջերու,  
 Պողաւորներ՝ էդ, արու,  
 Փախան, մտան ծակէ ծակ  
 Ջագը անտէր, մէրն անձագ  
 Նապաստակն էլ լալագին  
 Գնաց ասաւ տատրակին.  
 —Մնաս բարով, քաւորկին,

Պէտք է գնամ,  
 Ի՞նչպէս մնամ.

Ականջներիս էս շուքը  
 Չորացրեց իմ թուքը:  
 —Իրանից ի՞նչ...  
 —Չոռը քո պինչ.  
 Բա չը գիտես,  
 Այ թռչուն,  
 Քանի լրտես  
 Կայ շրջուն,  
 Ականջներս որ մեծ են,  
 Սուր-սուր պողեր պիտ կարծեն.  
 Դէհ, դու ասա, ո՞նց մնամ,  
 Մնաս բարով, գամ, չըգամ:

◆◆◆◆◆

## ԱՂԻՒՍՆ ՈՒ ԷԾԸ

Աղւէսն ասաւ, «Է՛շ բեռի,  
 Ի՞նչ ես բռնել վերվերի»:  
 Էշը թէ՝—Սուս, մեր տղայ,  
 Ես որ մօրից նոր եղայ,  
 Մի տեսնէիր առիւծին,

Ես ի՞նչ գիտեմ քանի ծին  
 Հիւանդ ընկել է այրում,  
 Վերջին օրերն է համրում:  
 Ով անցնում է մօտովը  
 Հարւածում է ոտովը:  
 Էլ չը մնաց կենդանի,  
 Որ իր վրէժը չընանի:  
 —Քեռի, բա դու ի՞նչ արիր,  
 Դու էլ վրէժդ հանեցիր.  
 —Բա կարծում ես մնացի,  
 Ես էլ նրան մի քացի:

---

### ԳԻՒՂԱՅԻՆ ՈՒ ԾԱՌԸ

Փայտհատ Մոսին  
 Կացինն ուսին  
 Մտաւ անտառ:  
 —Հնգիս, —ասաւ, —նրան մի ծառ,  
 Դալար մնան քո կոները.  
 Կացինդ առ, էս ծառերը  
 Իմ բոլորից ջարդիր, զատ-զատ,  
 Ինձ չեն թողնում բուսնեմ ազատ:

ՏԵս, կապել են գլխիս կամար,  
 Արև չըկայ խեղճիս համար.  
 Էս մթան մէջ խոնաւ, նեխւած,  
 Արմատներիս տեղը նեղւած,  
 Ի՞նչպէս կարող եմ գօրանալ,  
 Շըջակայքի զարդը դառնալ:  
 Կացինն առաւ փայտհատ Մոսին.  
 Հա էս ծառին, հա միւսին,  
 Ծառի շուրջը լայն ու արձակ  
 Մի տեղ բացեց, շատ ընդարձակ:  
 Բայց խնդումը շատ չը տեեց  
 Ու լաւ օրւան վատն հետեւեց.  
 Հա արել ծառը մրկեց,  
 Հա կարկուտը ճիւղքից զրկեց.  
 Ու մի օր էլ քամին սաստիկ  
 Կոտրեց ծառը չարբաստիկ:



## ԱՐՄԱՏՆԵՐՆ ՈՒ ՏԵՐԵՒՆԵՐԸ

Տերևները ծառի ծէրին  
 Ասում էին զեփիւռներին.  
 —Բա էս հովաի արդն ու զարդը  
 ՄԵ՞նք չԵ՞նք ու մեր խիտսաղարթը.  
 Ի՞նչ կը լինէր ծառի հալը,  
 Թէ չը լինէր մեր հով տալը,  
 Ամռան շոքին,  
 Ամռան տաքին  
 Էս ծառի մօտ ով կըգայ, ով,  
 Թէ որ չը տանք մԵնք հով ու զով:  
 Արշալոյսին,  
 Վերջալոյսին  
 Մեր մէջ սոխակն երգ չէր ասի,  
 Դուք զեփիւռներ,  
 Համասփուռներ,  
 Մեզ հետ երկար չէիք խօսի:  
 —Բաժին չունեաք այդ պարծանքից  
 Զայներ եկան ծառի տակից:  
 — Ո՞վ է, ասին տերեները.

— Այդպէս բազմած վերհները,  
 Բա դուք իսկի չէք ամաչում,  
 Որ մեղ երբէք չէք ճանաչում:

Զեր ծնունդը,  
 Զեր սնունդը՝  
 Գարուն գալիս  
 Ո՞վ է տալիս:  
 ՄԵ՞նք այս ծառի արմատներն ենք,  
 Զեր ու ծառի գլխի տէրն ենք.  
 Ի՞նչ էք, ի՞նչ չէք,  
 Կանաչեցէք,  
 Բայց այս բանը լաւ իմացէք.  
 Տերևներն են զնացական,  
 Արմատները մնացական,  
 Արմատներն որ չորանան,  
 Ծառ ու տերեւ ուր կը մնան:





Գ Ա Ռ Ը

## Գ Ա Ռ Ը

Ե, ի՞նչ ասեմ գառան մասին.—  
 Հաջանները՝ գայլ է, ասին,  
 Վրայ հասան զզզեցին,  
 Բուրդը-մուրդը խզզեցին,  
 Ու կախ տւին ծիլա-ծիլա:  
 Լաւ էր հլա  
 Հովիւը շուտ վրայ հասաւ,  
 Գրկեց,  
 Փրկեց,  
 Պաշեց, ասաւ.  
 — Այ իմ բժիկ,  
 Այ իմ գժիկ,  
 Գայլի մորթով ինչու խայտաս,  
 Ու քո մորթն էլ շներին տաս:



## ՍԱՐԴԻՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Վաճառականն իր խանութում  
Կտաւ ծախում, փող էր դատում:  
—վայ, ես ջուլհակ—ասաւ սարդը,—  
Կտաւ ծախէ յիմար մարդը՞:  
Մի գիշեր գայ բարով-խէրով,  
Կտաւ գործեմ ես թոփերով:  
Ու խանութում, իրեն տանը  
Սարդը հիմնեց իր սատայնը.

Հանեց իլիկ,  
Մանեց թելիկ,  
Քաշեց լէնքը  
Ու էրկէնքը.  
Ելաւ, մտաւ,  
Գործեց կտաւ  
Այնպէս արագ,  
Օյնպէս բարակ...  
Լուսաբացին  
Թուռը բացին,

Մտան խանութ,  
Մէջն աւեցին,  
Պատ, լուսամուտ  
Որ սըբեցին,  
Սարդին ընով  
Դուրս գցեցին:

—Մեղա, զոչեց կատղած սարդը,  
Բա նախանձ չէ այս չար մարդը.  
Դէհ, ճիշտն ասա, քո աչքումը  
Ում կտաւն է բարակ, ինւմը,  
Էս սարդինը,  
Թէ մարդինը:

—Քոնն է բարակ, վարպետ  
սարդիկ,

Ասաւ մեղուն, — բայց որ մարդիկ  
Քո կտաւից շոր չեն կարում.  
Նա բարակ է, տաք չի պահում:

## ԳԱՅԼԻՆ ՈՒ ԱՂԱԽՆԻՆ

Մնաս բարով,—այ դրկից,—  
Գայլն է ասում Աղաւնուն,—  
Փուլ գայ. էս կողմը հիմքից,

Ոչ հանգիստ կայ և ոչ քուն։  
Մարդիկ, շներ... անօրէն,  
Մէկը մէկից անզգամ,  
Ողջը տակս կը փորեն,  
Ի՞նչպէս ազատ ես ման դամ։  
Գնամ, գնամ հեռանամ,  
Իրանց իւպառ մոռանամ։  
—Բարով գնաս, բայց թէ ուր.  
Էնալէս մի կողմ ինձ ցնյց տուր,  
Որտեղ բուրդդ չը քաշեն...  
—Այ տնաշէն...

Լսած կամ Սրկադեան դաշտ,  
Թէ բախտաւոր, թէ շատ մեծ.  
Այնտեղ մարդիկ խաղաղ, հաշտ,  
Ոչ կռիւ կայ և ոչ ծեծ։  
Դաշտն օրհնել է հէնց Տէրը,  
Կաթն են հոսում գետերը։  
Մարդիկ արիւն չեն ծծում,  
Շները ոչ թէ կծում,  
Մինչև անզամ չեն հաջում,  
Սուերից են ամաչում։  
Ապրին այնտեղ բախտ է, բախտ։

Այնտեղ երկիր չէ, այլ դրախտ։  
Մի երկիր է երջանիկ,  
Մնաս բարով, այ ջանիկ։  
—Բարի ճամփա...  
Հա հապա  
Ատամներդ...  
Էլի՞ հետդ...  
Ի՞նչ, թողնեմ, սուս, սուս։  
—Որ էգպէս է, աչքիս լոյս,  
Սաղ չի մնար քո մորթին  
Թոշունն ասաւ ճամփորդին։



Գայլն ու Աղաւնին

Վարչեան առ անցած զնու  
աղջիկն ա մի զնու զնու է։  
17/12  
39

**ՇՈՒՆԸ, ՄՄԱՐԴԸ, ԲԱԶԵՆ,  
ԿԱՏՈՒՆ**

Շունը, Մարդը, Բազէն, Կատուն  
 Ըսկերացան, եղան մի տուն,  
 Երդւեցին նրանք,  
 Ասին՝ քանի կանք,  
 Անբաժան մնանք  
 Եւ իրար համար  
 Միշտ մահ ու մեռ տանք:  
 Ապրինք միասին, մեռնինք միասին:  
 Հիմա պատմենք զրանց մասին,  
 Այդ չորսի:  
 Չորսով գնացին որսի.  
 Շատ գնացին, քիչ գնացին՝  
 յոգնեցին,  
 Գետի ափին վեր թափւեցին,  
 քնեցին.  
 Մին էլ յանկարծ  
 Բերանը բաց  
 Մի արջ պլծաւ մօտ անտառից:

**ԸՆԿԵՐԾԵՐԻՑ**  
 Բազէն թուաւ դէպի վեր, կատուն՝  
 անտառ,

Մարդը վախից լեղապատառ  
 Այն է շունչը փչում էր...  
 Բայց ինչ խօսքի տէր Շունն էր,  
 Կոփւ մղեց արջի հետ,  
 Այս կողմ, այն կողմ, առաջ, ետ,  
 Կախւեց արջի վզիցը  
 Պոկ չէր գալիս արջիցը:  
 Մարդը թողեց իր շանը,  
 Նա լաւ գիտէր իր բանը,  
 Հենց խիստ կռւի ժամանակ,  
 Հրաձանը թեր տակ,  
 Դէպի գիւղը շիպ-շիտակ:



**ԵՐԿՆՔԻՑ ԿԱԽԱՄ ՔԱՐԵ**

Մի օր գոչեց հայր Արամազդ.  
 «Կենդանիներ, կազմ ու պատրաստ  
 Ով որ ունի դէմքին արատ,

Կամ թէ մի տեղ պակաս պռատ,  
 Թնդ գայ յայտնէ, իսկոյն ուղղեմ,  
 Իր ուզածի պէս փոփոխեմ»:  
 Ներկայացաւ նախ կապիկը  
 Մինչև բուկը իր շապիկը:  
 —Բարի Աստւած, ասաւ, մի հատ  
 Գոնէ չունեմ վրաս արատ.  
 Ինձ տւել ես համ ձեռ, համ ուր  
 Չորքոտանի արջին ամօթ.  
 Դունդ ու կծիկ,  
 Մազի պարկ է  
 Խոտի խրձիկ,  
 Շատ անկարգ է:  
 Եկաւ արջը իրա հանգին,  
 Մի լաւ բոթեց էն կապիկին.  
 «Այ կարճ շապիկ,  
 Անխելք կապիկ,  
 Խոսքն ասում են իրեն տեղին,  
 Այ, ինչ ասեմ ես այն փղին...  
 Ականջներ լօշտակ, լօշտակ,  
 Երկու հատը երեք մուշտակ,  
 Կնճիթն անչափ, պոչը մի մատ,

Աչքերը նեղ, կորեկի հատ»:  
 Փիղն էլ եկաւ ծանրավարի,  
 Կանգնեց, խօսեց փղավարի.  
 «Կորչի, ասաւ, էն կէտ ձուկը,  
 Կոշտ ու կոպիտ ջրի մուկը»:  
 Հանդէս եկաւ և մի մրջիւն,  
 Ասաւ՝ «Բնչ է էս լուն շրջուն,  
 Պստիկ, մստիկ,  
 Վլստ ու վստիկ,  
 Զագիս ձագն է  
 Ու քեռին էլ  
 Տը՝ զ, մոծակն է»:  
 Ու տեսնելով հայր Արամազդ,  
 Որ մի գին է բարակ ու հաստ,  
 Երկնքիցը մի քար կախեց,  
 Յետոյ գարձաւ յայտարարեց.  
 «Ով որ իրեն կը հաւանի,  
 Թնդ էս քարը գլխին ընկնի»:



## ԺԱՆՏԱԽՏ

Կենդանեաց մէջ խիստ ժանտախտ էր  
 Զը մեռնելը շատ մեծ բախտ էր:  
 Ճնաժամ էր օրհասական,  
 Ու ձայն տւեց առիւծ արքան.  
 — Կենդանիներ ինչքան որ կան,  
 Թոնդ հաւաքւեն, զահիս մօտ գան»:  
 Է, արքայի հրաման էր,  
 Դա էլ ժանտախտի պէս բան էր.  
 Սարսուռ ընկաւ դաշտ ու անտառ,  
 Գազանները լեղապատառ  
 Մեծ ու փոքր, բազմատարազ,  
 Արջ ու յովազ,  
 Վազը ու վարազ,  
 Զար բորենի, աղւէս ու դայլ,  
 Մէկ էլ էշը վսեմափայլ,  
 Հաւաքւեցին առիւծի դէմ:  
 Արքան գոչեց. «Ես ձեզ հետ եմ,  
 Իմ իշխաններ, ես լաւ գիտեմ,  
 Որ ձեր սրտից արիւն կերթայ.

Եթէ բանը այսպէս գնայ,  
 Այս ժանտախտին, ականջը խուլ,  
 Ամբողջ ցեղով կը գնանք կուլ:  
 Բայց լսեցէք, բան եմ ասում.  
 Ո՞ւմ մեղքիցն է այսպէս ցասում  
 Տէրն ուղարկել մեր հեզ ցեղին,  
 Մեղաւորին թէ անմեղին.  
 Աշխարհն առաւ ցեղիս լացը,  
 Հա վառում է չորն ու թացը:  
 Եկէք, ինզրեմ, անկեղծօրէն  
 Խոստովանւինք, — որս անօրէն  
 Բան ենք բռնել, մեծ մեղք գործել,  
 Որ վերն Աստւած է բարկացել:  
 Մէկն ես, որ ձեր գլխաւորն եմ,  
 Ձեր ամենից մեղաւորն եմ.  
 Քանի անմեղ գառ ու ոչխար  
 Ուղարկել եմ մթին աշխարհ,  
 Ու հովեին էլ լեղապատառ  
 Ինչպէս արել ճոթ ու պատառ:  
 Սա իմ մեղքն է, ճիշտն եմ ասում,  
 Որ բերել է այսպէս ցասում»:  
 Մեղքերն ասին արջ ու յովազ,

Զար բորենին, վագը ու վարագ,  
 Յետոյ և գայլ.  
 Վերջը էշը վսեմափայլ  
 Ասաւ. «Սա է միակ մեղս,  
 Արտի մօտով անցած տեղս,  
 Հակառակ է չարը բարուն,  
 Ես մի բերան զարկի դարուն...»:  
 Աղւէսն այդտեղ՝ լսեց, լսեց,  
 Ոտքի կանգնեց, մի ճառ խօսեց  
     Այնպէս արդար,  
     Այնպէս ճարտար,  
 Որ պիտ յիշվի հա դարէդար.  
 — Առէք, — ասաւ, — սուլթան ու խան,  
 Առէք նոյնպէս և իմ մեղան.  
 Ես ամենից մեղաւոր եմ,  
 Բայց թէ կացէք տեղաւորեմ.  
     Մեր արքան վէս,  
     Մեր արքան հեզ  
 Խոստովանեց իր մեղքը մեզ.  
 Բայց թէ խղճով եկէք դատենք,  
 Մեղքը վարձքից խելքով զատենք,

Լինի արքայ,  
 Սոված ման գայ.  
 Չուտէ ոչխամր...  
 Փուլ գաս աշխարհ...  
 Ո՞չ, Տէր Արքայ,  
 Ինչ ոչխար կայ,  
 Տէրն է տւել քեզ փայ-բաժին:  
 Այ ինչ ասեմ ես այն գժին,  
     Այն անտաշին,  
     Կոպիտ իշին.  
 Աստծու կանաչ արտը պոկէ,  
 Մեղքն ու վարձքը նա չը ջոկէ.  
 Ու մեր ցեղին այսպէս պատժէ,  
 Զէ, պէտք է դա կեանքով տուժէ...»:  
     Տեղից թռան գազանները,  
     Դունչ ու թաթիկ լիզանները.  
 Խելօք իշին գետին դրին,  
 Քթից բերին կերած գարին:



## ԴԵՂԱԱՆԻԿՆ ՈՒ ՏԱՏՐԱԿԻԿԸ

Դեղանիկը մի թակարդում  
 Զարկւում էր ու թվրտում:  
     Մի տատրակիկ,  
     Պուճուր ձագիկ  
 Ծիծաղում էր նրա վրայ.—  
 — Բա ամօթ չէ,—ասում էր նա,  
     Օր ցերեկով,  
     Բաց բաց աչքով  
     Բնկար այգպէս  
     Դու կոյրի պէս:  
     Ես լինէի,  
     Չէի խարւի,  
     Իմ արել:  
 Մին էլ՝ ընը՝  
 Ոտն ու թել  
 Գցեց ցանցը  
 Սնապարծը:  
 Տեղն էր, տեղը, էն տատրակին.  
 Ինչու ծաղրեց դեղանիկին:



## ՊՈՉԱՏ ԱՂԻԵՍԸ

Փախաւ աղւէսը,  
 Փախաւ թակարդեց,  
 Բայց պոչի կէսը  
 Թողեց նա ներսը:  
 Այդպէս պոչատ,  
 Պոչից անջատ,  
 Գնաց ասաւ ընկերներին.  
 — Այ ձեզ մատաղ, ես ձեր գերին,  
 Դէն գցեցէք ձեր պոչերը.  
 Ինչու են պէտք այդ փուչերը:  
 Իրանք զարդ չեն ու զարդարանք,  
 Այլ մեր գլխին պատիժ, փորձանք,  
     Գետնի աւել,  
     Վազքի խափան,  
     Մեզ անվայել  
     Աւելորդ բան:  
 Այդտեղ մի ձեր վարպետ աղւէս  
 Ասաւ նրան. «Ապրիս, ապրիս,  
 Այ ծակամուտ թռիս թռող, 5


Այդքան չեն տայ խելքի զօռը.  
Բա քանի որ տեղն էր պոչդ,  
Ինչու չարիր դու այդ կոչդ:

○○○@○○

### ՄԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Մուկը ընկաւ դռնէդուռ  
Էլ չը թողեց տուն-կտուր,  
Զահէլ-ահէլ գեղովի  
Զոջերից ջոկ, տեղովի,  
Կանչեց, բերեց ժողովի,  
Թէ ինչ անեն, որ կատուէն  
Մի. հնարքով ազատւեն,  
  
Եկան գեղի չոջերը,  
Երկար-բարակ պոչերը  
Մասնակցեցին խորհրդին,  
Մի մուկ խօսեց իր հերթին.  
—Լսէք, մկներ, ցեղակից,  
Զունիմ որդի, կողակից,

Ես մի անտէր ծերուկ եմ,  
Բայց պատւաւոր մի մուկ եմ.  
Պակսեց ուժը իմ ոտի,  
Պէտք է մեռնեմ անօթի.  
Սովու է չոքել դռանը,  
Ա'խ, այն կատուն, Մոռանը,  
Մտից սատկում, տազ անում.  
Մուկ է տեսնում, վազ անում,  
Բոնում գլխից, կախ անում,  
Թաթով տալիս, խաղ անում,  
Ուտում, քէֆը չաղ անում:  
Էսպէս զուլում ու կրակ,  
Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ.  
Բայց թէ ազնիւ մեր ցեղը  
Կորչելու չէ զուր տեղը.  
Յաւն էլ ունի իր գեղը,  
ԱՌ, բերել եմ ես մի զանգ,  
Ծափ-ծրնգոց,  
Մէջը զնդոց.  
Կատուի վզից մենք կախ տանը,  
Որ ինչքան էլ օրօրայ,  
Որ ինչքան էլ շորորայ,



Մկների ժողովը:

*(Handwritten signature)*

*(Handwritten signature)*

Ստից սատկի, տազանի,  
Գալն իմանանք գազանի:  
Է՛, զանդը ով կախ անի.

—Ալօ, դու.

«Ալծն տանի».

—Բալօ, դու.

«Բալծն կախէ».

—Զալօ, դու.

«Զալծն կաղ է».

—Մսո, դու.

«Մսոն կարձ է».

—Փսո, դու.

«Եղ էլ խբդճ է».

—Համբօ, դու.

«Ես տկար եմ».

—Զամբօ, դու,

«Ասենք տարայ».

Բա որ կատուն գայ ինձ վրայ»:

—Բտօն, Խտօն թնդ մէկից

Բոնեն կատւին քամալից»:

«Ի՞նչ է խօսում չոր գանդը».

Լաւ է դու տար էդ զանդը».

Ել ինչ Բտօ, ինչ Փստան»,  
Ճստաց Բտօն ճստճըստան:  
— Լոկի յանդուգն.  
Կոտորւիք դուք.  
Վախկոտներիդ եռ թաղեմ.  
Ճառ ասեմ թէ զանգ կախեմ,  
Գոչեց ջոջը,  
Քաշեց պոչը:

### ԳԱՅԼԸ

Գող-աւազակ գայլի մէկին,  
Չոքած գտան գառան բգին.  
Նրան բռնած գիւղը տարան,  
Գլխին արին ժամ-պատարագ  
Ու կարդացին Աւետարան,  
Որ նա դառնար խոտաճարակ-  
իրեն փոխէ,  
Ճանձ չը կոխէ:  
Ամբողջ գիւղը ժամ, աղօթքի՝  
Մէկ էլ գայլը ելաւ ոտքի.  
— Ե՛, շնւռ արէք, ժամւոր, ասաւ,  
Ոչխարն արդէն սարր հասաւ:


— ՀՕ —

### ԳԱՅԼՆ ՈՒ ՄԿՆԻԿԸ

Գայլը հօտից իր հանգի  
Զարկեց տարաւ մի մաքի,  
Կերաւ փորն ու փորը,  
Պառկեց մինչև կէս օրը:  
Մուկը հեռւից հոտմտաց,

Ելաւ ոտաց  
Հոփիկ-թոփիկ  
Ու մի ձօթիկ  
Մոից առաւ  
Ու թռաւ:  
Գայլ զարթեց,  
Իրեն ջարդեց,  
Թէ հայ-հարայ,  
Ալան, թալան  
Է, պահապան,  
Մատնեցին,  
Վատնեցին.  
Ինչ ունէի՝ թալանեցին:





Շունն ու Զին.

## ՇՈՒՆՆ ՈՒ ԶԻՆ

Մի տան բակում շունն ու ձին  
իրար առան, վիճեցին:

Շունը ձիուն  
Թէ՝ գլխիդ ձիւն.  
Ի՞նչ մեծ բան ես.  
Բեռ կը տանես,  
Արտ կը վարես,  
Զի, ձի, խնոցի.  
Վրան հեծի,  
Տար դէն զցի:

Է, թող կորչի աննշանը.  
Այ, ինչ ասեմ ինձպէս շանը.  
Ես ցերեկով տունը պահեմ,  
Ես գիշերով հօտին նայեմ՝  
Զին ոտ մեկնի ինձ հաւասար:  
Զին թէ ճիշտ է, հաջան Բասար,  
Ես որ հանգիստ կողքիս պառկեմ,

Բեռ չը կրեմ,  
Արտ չը վարեմ,  
Տուն կը լինի՞, որ դու պահես,  
Հօտ կը լինի՞, որ դու նայես:

։։։։։։

### ԿԱՊԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ

Իրեն տեսնելով  
Հայելու միջին,  
Կապիկը ոտով  
Մի բոթեց արջին.  
— Թեոփ, սրան տես,  
Սա ովէ, գիտե՞ս.  
Էս ինչ ռեխ է,  
Կնձոռտ տրեխ է,  
Հրէշ, ցուցանք,  
Պատիժ, փորձանք:  
Ինձ տեղն ու տեղ կսպանէի,  
Թէ քիչ սրան նմանէի:  
Բայց թէ ես էլ ինչու հետ եմ,  
Եղակս ցուցանք քչին գիտեմ,

ԿԱՊԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ



Թւեմ զատ-զատ,  
 Մերոնց մէջ շատ:  
 —Քան թէ թւես  
 Զերոնց զատ-զատ,  
 Լաւ չէ նայես,  
 Խելօք, վրադ,  
 Արջը ասաւ,  
 Բայց թէ խօսքը տեղ չը հասաւ:

○○○○○

### ԿԱՏՈՒՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Խեղճուկ մուկը խնդրեց կատւին,  
 —Ասլան-բալա, քո հօր պատւին,  
 Արի ինձ թռի,  
 Դառնամ մի դոխ,  
 Լիստիկ ու գեր,  
 Բոնիր ու կեր:  
 Թէ վաղ թէ ուշ՝ քեզ համար եմ,  
 Բայց հիմա ես շատ նիհար եմ:  
 Դու էլ չուտես,  
 Հօ լաւ գիտես՝  
 Որդիդ կուտէ,  
 Ասա, սուտ է:

—Ա՛յ, հնդը գուն,  
 Ասաւ կատուն.  
 Առաջ մորթուս,  
 Յետոյ որդուս,  
 Մկին բամփեց,  
 Փորը ճամփեց:  
 ○○○○○○○○○○

### ԱՆՄԵՂՆ ՈՒ ԱՌԻՒԾԸ

Սպանւել էր մայր առիւծի կորիւնը.  
 Աչքը կոխած արիւնը  
 Մոնչում էր, փրփրում  
 Ու գետինը փորփրում:  
 Մին էլ ծառից մի մայր անծեղ  
 Ասաւ. «Տիկին ազնւացեղ,  
 Հլա խօսքը մեր մէջ մնայ.  
 Բա էն լաւ է, որ անխնայ  
 Դու լափում ես այլոց ձագեր,  
 Խղճի արի, այ արնակեր»:



## ԽՈԶՆ ՈՒ ԱԳՐԱՄԸ

Մի դարեւոր կաղնու տակ  
 Խոզը ագահ ու անյագ  
 Այնքան կաղին զխտւեց,  
 Որ ցած ընկաւ ու փռւեց:  
 Չարթնեց քնից ու տակից  
 Ծառը փորեց արմատից:  
     —Ի՞նչ ես անում, այ անգէտ,  
     Կը չորանայ արեից,  
     Ագռաւն ասաւ վերեկից:  
     —Չորանում է՝ չորանայ,  
     Ինձ ի՞նչ օգուտ՝ գօրանայ.  
 Միայն կաղին ունենամ,  
 Ուտեմ, պառկեմ, գիրանամ:  
     —Այ ապերախտ կենդանի,  
     Ով քեզ նման վիզ ունի,  
     Իր կոյր աչքով չի տեսնի,  
     Որ կաղինը հիւթալի  
     Լոկ այս ծառն է ձեզ տալի,  
     Ագռաւն ասաւ խոզուկին,  
     Այն կախ գլուխ կուզիկին:

---



Ագռաւն ու Խոզը:

## ԱՆՅԱՆԹ ԱԳԼՈՐԸ

—Զու, ջու, ձեղ բրինձ,  
 Ով որ չը գայ, ճուտը ինձ,  
 Տանեմ ծախեմ՝ գինը ինձ.—  
 Էղպէս կանչեց մեծ նանը,  
 Կուտը ցանեց դռանը:  
 Որ չը տեսան կուտ-կուտիկ,  
 Սքլոր ու հաւ, ճուտ-ճուտիկ  
 Վրայ հասան, ճը՛տ, հա ճը՛տ,  
 Վեր քաղեցին կը՛տ, հա կը՛տ,  
 Երկու աքլոր-երկու խե,  
 Մինը չալիկ մինը սե,  
 Մէկը մէկից քաջ, արի,  
 Կոիւ բացին աքլորի.  
 Մկօն քիթը մի մխտեց  
 Զալի աչքն ու յաղթեց.  
 Յետոյ թուաւ տանիքը  
 Ու սկսեց իր երզը.  
 —Ծուղրուղու, յաղթեցի,  
 Քիթս աչքը մխտեցի:

Մէկ էլ վերից ուրուրը  
 Թափով նետւեց կտուրը,  
 Զարկեց տարաւ յաղթողին՝  
 Քիթը աչքը մխտողին:

---

## ՎԱՏ ԸՆԿԵՐԸ

Մի անգամ

Առիւծ արքան

Մռնչում էր կողի ցաւից:  
 Գազանները ամեն կողմից  
 Եկան հիւանդ արքային տես,  
 Բայց մէջերնին չըկար աղւէս:

Էդտեղ մէկ էլ

Մի պառաւ գէլ

Ասաւ. «Աղքայ,

Ախըր ի՞նչ կայ,

Որ աղւէսը,

Թիգ ու կէսը,

Քեզ չէ յարգել.

Տես, չէ եկել:

Յաւը թողած՝

Արքան, գոռաց.  
 Թէ հա թռէք,  
 Էն ըմբոստին  
 Ոտս բերէք:  
 Հինք-վեց գազան  
 Ելան հասան,  
 Էն աղւէսին  
 Մի կերպ գտան,  
 Պատճառն ասին,  
 Բերին ատեան:  
 Արքան գոռաց.  
 —Ուր ես, մեռած:  
 —Ասեմ ձեռաց,—  
 Աղւէսն ասաց.—  
 Տէր վեհափառ,  
 Խնդիրս առ.

Որ լսեցի՝ դու հիւանդ ես,  
 Ել ի՞նչ ասեմ, ինձ հօ գիտես.  
 Ինչպէս զլսիս կրակ վառած  
 Եւ պատանս էլ թևիս առած,  
 Հա էստեղը, հա էնտեղը,  
 Վերջը գտայ ցաւիդ դեղը.

Գայլի մորթին արա մուշտակ,  
 Միսը շորւայ, խմի տաք տաք,  
 Քրտնեց կողքդ՝  
 Կանցնի դողդ:  
 Որ չը տւեց էսպէս թելին,  
 Խսկոյն գետին դրին գէլին.  
 Արքան հազաւ գէլի կաշին,  
 Միսը կերաւ նախաճաշին:  
 Քրտնեց կողը,  
 Անցաւ դողը,  
 Մէջտեղ գնաց  
 Զըրպարտողը:

### ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՐԸ

Մի ամլիկ գառ  
 Իրեն համար  
 Զուր էր խմում առւակից.  
 Մէկ էլ դէմի ձորակից  
 Գայլն է կտրում վերել,  
 Խօսքին տալով էս ձեր.  
 — էս ի՞նչ լրբութիւն,

Ի՞նչ յանդգնութիւն,  
Ա՛յ դու փսլնքոտ,  
Ոչխարի լակոտ.  
Դու ինչի՞ տէր ես,  
Որ գաս դնչովդ,  
Քթով-պնչովդ  
Չուրս պղտորես:  
Բռնեմ դունչդ,  
Կտրի շունչդ:

«Մի բարկանար, պարոն գայլ,  
Քեզնից ցած եմ քանի քայլ,  
Էնպէս բան ես ասում որ...  
«Մուտ եմ ասում, այ լղպոր.  
Էդ էլ չըլնի հերւանը,  
Չեմ մոռացել էն բանը,  
Որ հէնց էստեղ, նոյն օրը,  
Հայհոյեցիր իմ հօրը:  
—Մի տարեկան դեռ չըկամ...  
«Ե՞ն, եղբայրդ էր, անզգամ»:  
—Ես մի ծին եմ, մինուճար...  
—Խնամիդ էր անպատճառ,  
Կամ մէկը ձեր պիղծ ցեղից,  
Էլ ժաժ չը գաս քո տեղից:

Զեր շների,  
Հովիւների  
Ոխը քեզնից ես հանեմ,  
Տնս գլուխդ ինչ բերեմ:  
Ասաւ, հասաւ գառանը,  
Առաւ, թռաւ անտառը:

### ՎԱՅԸ ՄԵԿԻ ՏԻՐՈՁԸ

Մի այրի կին գիւղի հօտում  
Ունէր չունէր մի հատ մաքի,  
Բուրդն էր մանում, կաթը կթում,  
Չէր ուզում որնա ցամաքի:  
Ու մի օր էլ, թող յետ չը գայ,  
Գիւղը հասաւ սարից բօթը,  
Թէ չէք ասի, գայն ագահ  
Հովկից ծածուկ ընկաւ հօտը,  
Պատառոտեց այրու մաքին,  
Լացեց կինը խիստ դառնագին,  
Լացեց, ասաւ.—շատը շատին,  
Գայլի վնասն էլ աղբատին:  
Գայլն ընկաւ ոչխարի մէջը,  
Վայն եկաւ մէկի տիրոջը:



Գայլն ու Գառը:

## ՀԱԿԱՅ ՄՐՁԻՒՆԸ

1. Հեն ժամանակ  
 Մասրենու տակ  
 Ծնւեց (մի մը ջիւն:  
 Մրջիւն, ինչ մը ջիւն.  
 Ուժեղ, վիթխարի,  
 Երկու մեծ գարի  
 Մէկից էր տանում:  
 Էսպէս են պատմում,  
 Որ մը ջնառդին  
 Յաղթեց և սարդին.  
 Եւ մը ջնանոցի՝  
 Փոքրի և մեծի  
 Խօսքի առարկան  
 Դարձաւ էդ հսկան:  
 Մրջնանոցում էդ քաջ հսկան,  
 Քիչ հաշւելով հոչակն էսքան,  
 Մի ամառ օր մտաւ քաղաք.  
 Փողոցի մէջ, մարդկանց առաջ,  
 Տերեն առաւ ու շալակեց,  
 Հնկաւ, ելաւ, տարաւ, բերեց.

Բայց թէ մէկը  
 Գէթ մի բերան  
 Զասաւ նրան՝  
 «Կեցցես, մըջիւն,  
 Սար ես շրջում»:  
 Տեսաւ շանը, ասաւ. «Բօղար,  
 Գլխի եղար,  
 Որ քաղաքում,  
 Աւերակում,  
 Մարդիկ կոյր են,  
 Կոյր չեն, ուր են,  
 Թէ, դու ասա.  
 Օրէնք է սա.  
 Ոյժս փորձեմ,  
 Հրաշը գործեմ,—  
 Մէկը չը գայ,  
 Ասի, հսկայ,  
 Ես սար շրջեմ...  
 — Մարդիկ ինչ են,—  
 Ասաւ շունը.—  
 Սրա ըռիսին,  
 Ցիմար գլխին,

Ինքը մըջիւն՝  
 Սար է շրջում:  
 Սրան մտիկ,  
 Լոբու հատիկ,  
 Էս չէ տեղդ,  
 Հայդէ գեղդ.  
 Քեզ քաջ հսկայ  
 Էնտեղ ըզգայ:  
 ....

### ԳԱՅԼՆ ՈՒ ՇՆԵՐԸ

Գայլը մի օր  
 Տեսնում է, որ  
 Հովիւները դանակներով  
 Կտրատում են մի գէր ոչխար,  
 Իսկ շները լուռ, անվրդով  
 Թափւել են վար,  
 Ղրմում չեն,  
 Մրմում չեն:  
 Գայլը նրանց ի՞նչ է ասում.  
 — Կոտորւէք դուք՝ ի՞նչ վայնասուն  
 Կը հանէիք դուք խմբովի,  
 Թէ այդ բանը ես անէի:



## ԱՆՑՈՐԴՆԵՐՆ ՈՒ ՇՆԵՐԸ

Մի անգամ  
 Երկու բարեկամ  
 Անցնում էին խօսելով:  
 Սրանց ձայնը լսելով  
 Մի շուն բակից,  
 Դուան տակից  
 Վազեց վրա.  
 Մին էլ ահա  
 Կեռ պոչերը,  
 Թաց դնչերը  
 Բարձրացրին հարայ-հրոց,  
 Եւ փողոցը դարձաւ շնոնց:  
 Մի անցորդը ծուեց քարի,  
 Էն միւսը թէ, ախալէր, արի,  
 Քարով էլ շատ կը գազազին,  
 Միշտ այդպէս են շունն ու  
 թաղին:  
 Եւ ճիշտ նրանք, որ քիչ անցան,  
 Էլ հաջոցի ձայն չիմացան:



Անցորդներն ու Շները:

## ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՍԱՆՐԸ

Մի մօլբալիկ,  
Սիրուն մանուկ,  
Մի սանր ունէր  
Նոր ու բանուկ:

Գանգուրներն իր կոխնձ-մոխնձ,  
Թելիկ-մելիկ ոսկի նարինջ.  
Նա սանրում էր ու հիանում,  
Շիմշիր սանրը լաւ էր բանում:  
Ու մի օր էլ սանրը կորաւ,  
Եւ մանուկը լացը դրաւ:  
Կորած սանրը երբ գտնւեց,  
Թնջկւած գլուխն էլ չը սանրեց:  
Մազերի մէջ տնկւեց մնաց,  
Ետ ու առաջ էլ չը գնաց:  
Մանուկն ասաւ. «Ա՞յ իմ սանր,  
Ի՞նչ ես շարժւում այդպէս ծանր,  
Իմ առաջւայ լաւ սանրը չեսա:  
—Ո՞չ, —սանրն ասաւ, —ոչ, նոյնն եմ ես,  
Բայց մազերդ դու թնջկել ես:

•••••••

## ԿՈՏԼՈԶ ԳԴԱԼԸ

Ճաշ ուտելիս սպաս բերին,  
 Անփոր գդալն ընկաւ հիւրին.  
 Համ անփոր էր,  
 Համ կոտլող էր,  
 Բեռ չէր տանում  
     Ուզէր, չուզէր:  
 — Հայրիկ, — ասաւ որդին հօրը, —  
 Մի դու մտիկ էս ախպօրը,  
 Մեր կոտլողին բառնալ կուզէ.  
 — է՛, բան չունես, որդիս, լոէ,  
 Թէ կոտլողը մեր կոտլողն է,  
 Նա իր օրում բեռ տանող չէ։


## ԵՐԿՈՒ ԱՖԼՈՐ

(Հայ-թիւրք. կոտորածների առթիւ)  
 Նանին ունէր երկու արլոր,  
 Մի թուխսի ճուտ, իրար սովոր.  
 Կատարները կարմիր լալայ,  
 Փետուրները բամբկի քուլայ։

Ման գալները հպարտ-հպարտ,  
 Ապրում էին ուրախ, գւարթ.  
 Բակն իրենցն էր, դուռը նանին,  
 Ամեն մէկը իրեն բանին:  
 Մի օր նանը հաւաթառին  
 Կարմիր ներկեց աքլորներին.  
 Առաւօտեան բարիլուսին  
 Մի տեսնէիր դու երկուսին:  
 Իրենց տան մէջ, իրենց բակում,  
 Ինչ են իրար գլուխ թակում.  
 Ու հէնց էնալէս, իրար օտար,  
 Արիւնլւայ երես, կատար,  
     Ճղրտալով.,  
     Ճղրտալով,  
     Եկան, եկան  
     Առուն ընկան։

Զրում մի լաւ տղկւեցին,  
 Ու էնտեղ էլ սիպտակեցին:  
 Ներկը գնաց փետուրներից.  
 Երբ որ նրանք ելան ջրից,  
 Ճանաչեցին նոր մէկ մէկու  
 Ու կանչեցին կուկուիկու։

—Այ կոտրւէր նանի ձեռքը,  
Մեղաւոր էր կարմիր ներկը:



Երկու աքլոր:

### ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից  
Փախաւ գեղը,  
—Նեղն եմ նեղը.  
Քո հօր պատւին,  
Ասաւ կատւին,—  
Ասլան բալա,  
Մի ճար արա:  
Մի տես հալա  
Որսորդ ու շուն  
Թազի, թուլա  
Միսս են կըրծում,  
Ինձ հալածում:  
Աստւած կտրի դրանց հոտը,  
Մի մարդ ցոյց տուր պահեմ մօտը:

—Այ ցեղակից,—գոչեց կատուն,  
Գնա մտիր Մարօի տուն.,  
Նա չափաղանց բարի կին է:  
—Ես էլ գիտեմ, որ անգին է,  
Բայց որ նրա հորթն եմ կերել...  
—Իկիդ կանգնէր, լաւ չես արել:  
Այ Դաւթի մօտ, կուզես կանչեմ:  
—Նրանից էլ ես կամաչեմ.

Հէնց ամառը

Տարայ Դաւթի փոքրիկ գառը:  
—Էլ ում ասեմ. հա, մեր Զաքին:  
—Էս գարնանն էլ նրա մաքին:  
—Էլ ով մնաց... հա, երէցը.  
—Էս աշնանն էլ դրա էծը...  
—Այ դու ուտես չոռի մեծը,  
Քանիսն եղաւ .. հինգը վեցը...  
Ի՞նչ երեսով, այ գող վատթար,  
Գիւղը մտար,  
Տեղ չը գտնը:  
Գիւղն յիմար է,  
Որ թշնամուն պատսպարէ,  
Ով ինչ ըրթէ,  
Էն կը խըթէ:



ԱՂԻԵՍԸ, ԳԱՅԼՆ ՈՒ ԱՐՁԸ

Մի գէլ, մի արջ, մի աղւէս  
Ապրում էին ախազօր պէս,  
Մի օր գտան մի մեծ փարչ  
Փորը լէն-լէն, բուկը կարճ,  
Մէջը լիքը-լիքը եղ  
Ու պահեցին մի լաւ տեղ,  
Որ յետի օրն էն եղէն  
Գաթայ թխեն-թխմխեն:  
Գէլը մի օր, կերակի,  
Գնաց բերեց մի մաքի.  
Արջը գնաց կըակի  
Ու աղւէսն էլ իր հանգի  
Միսը արեց խաւուրմայ.  
Էդ էլ եղի մօտ մնայ:  
Էն աղւէսը եղն ու միս  
Ծածուկ կերաւ մի ամիս.  
Վերջը կանչեց՝ ովայ, աման,  
Ո՞վ է կերել խաւուրման,  
Ո՞վ է կերել մեր եղը,

Բան չէ թողել իր տեղը:»  
Արջը էնտեղ փընթփընթաց,  
Գէլը կանգնեց ու վընգվընգաց՝  
Աղւէսն էլ սուտ թընկթընկաց,  
Ա՛խ խաւուրմայ, ախ գաթայ:  
Այ էսպէս էլ մեծ խաթայ:  
Այ թէ գտնեմ ես գողին,  
Ժարչը ջարդեմ իր կողին:  
Բայց չէք կարող ինձ խափել,  
Արջիկ-փարչիկ, գէլ ու փէլ  
Եկէք, եկէք այստեղ մենք  
Արկի դէմ քիչ քնենք,  
Ում կոնակից եղ դուրս դայ,  
Նա է գողը—կայ-չըկայ:  
Ու փուեցին երկար, կարճ՝  
Գող աղւէսը, գէլն ու արջ:  
Արջ ու փարչը, գէլ ու փէլ,  
Հէնց որ առան մըափել,  
Փուչ աղւէսը սուտ ու փուտ,  
Իր թաթերին կուզէկուզ  
Ելաւ բերեց բղիկը,  
Բերեց մի մատ եղիկը,

Քսեց մէջքին խեղճ գէլի.  
Արջին ասաւ. «պատւելի»,  
Վեր կաց, գտայ մեր գողը.  
Գէլն է կերել մեր եղը,  
Ու երկուսով տեղն ու տեղ,  
Գէլին արին փորի դեղ.



## Յանկ

Աքլորն ու	մարգարիտը	—	—	—	—	4
Ճպուռն ու	մըջիւնը	—	—	—	—	4
Ագռաւն ու	աղւէսը	—	—	—	—	6
Ճանձը	—	—	—	—	—	10
Գորտն ու	կովը	—	—	—	—	10
Կլուն ու	տատրակը	—	—	—	—	13
Նապաստակները	—	—	—	—	—	16
Գորտը	—	—	—	—	—	19
Գորտն ու	ագռաւը	—	—	—	—	19
Ամպն ու	սարը	—	—	—	—	20
Խեցեմորթն ու	գորտը	—	—	—	—	21
Քամին ու	մարագը	—	—	—	—	22
Փայտահատն ու	մահը	—	—	—	—	22
Աքաղաղն ու	կտուրը	—	—	—	—	25
Քամին ու	մժեղը	—	—	—	—	26
Պուտուկը	—	—	—	—	—	26
<i>X</i> Գայլն ու	կատուն	—	—	—	—	27
Լորն ու	թռչնորսը	—	—	—	—	29
Որսորդն ու	նապաստակը	—	—	—	—	30
Կրիան	—	—	—	—	—	32
Բարեսիրտ աղուէսը	—	—	—	—	—	33
Կաղնին ու	եղեգը	—	—	—	—	37
Կկուն ու	աբլորը	—	—	—	—	39
Ուղտի ականջները	—	—	—	—	—	43
Նապաստակն ու	տատրակը	—	—	—	—	44
Աղուէսն ու	էշը	—	—	—	—	45

Գիւղացին ու ծառը	—	—	—	46
Արմատներն ու տերևները	—	—	—	48
Գառը	—	—	—	51
Սարդն ու մեղուն	—	—	—	52
Գայլն ու աղաւնին	—	—	—	53
Շունը, մարդը, բազէն	—	—	—	56
Երկնքից կախած քարը	—	—	—	57
Ժանտախտ	—	—	—	60
Դեղձանիկն ու տատրակները	—	—	—	64
Պոչատ աղւէսը	—	—	—	65
Մկների ժողովը	—	—	—	66
Գայլը	—	—	—	70
Գայլն ու մկները	—	—	—	71
Շունն ու ձին	—	—	—	73
Կապիկն ու հայլին	—	—	—	74
Կատուն ու մուկը	—	—	—	79
Անծեղն ու առիւծը	—	—	—	77
Խոզն ու ագռաւը	—	—	—	78
Անյաղթ աքլորը	—	—	—	80
Վատ ընկերը	—	—	—	81
Գայլն ու գառը	—	—	—	83
Գայը մէկի տիրողը	—	—	—	85
Հսկայ մըջիւնը	—	—	—	87
Գայլն ու շները	—	—	—	89
Անցորդներն ու շները	—	—	—	91
Մանուկն ու սանրը	—	—	—	93
Կոտլող գդալը	—	—	—	94
Երկու աքլոր —	—	—	—	»
Գայլն ու կատուն	—	—	—	96

X

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Դիմել Թիֆլիսի հայ գրախանութեալ.

Հրատարակ. Ընկերութեան գրասենեակի հասցէն,

Тифлисъ Сергиевская ул. № 20

ՀՀ Ազգային գրադարան



NL0341147

34721

